

13 ՀՐԵԱՆԵՐՈՒՆ ԲՈԼՈՐԸ ՄԱՀԱՎՃԻՌ ԶԵՆ ԴԻՄԱԳՐԱԻԵՐ

Իրան երկկայունաց, որ լրտեսությունը ամբաստանում 13 հրեաներուն բոլորը մահավճիռ կամ ցեղանա քանտարկություն վճիռ չեն դիմագրաւեր: Իրանի արդարադատության նախարարության բանբերը ըսաւ, որ քանի որ ամբաստանաւորներ ծանր վճիռ կը դիմագրաւեն եւ ասիկա կարելի չէ ընդհանրացնել բոլորին համար: Ան ըսաւ, որ 13 հրեաները կրնան ընտրել իրենց պաշտպան փաստաբանները եւ հերքեց այն տեղեկությունները, թէ անոնց վրացում է պաշտպան փաստաբաններ ընտրելու իրաւունքը: Բանբերը նշեց, որ մինչ դատավարության թուականը կը մտնենայ, Իրանի դէմ հակաքարոզչությունը թափ կը ստանայ: (ՌՅԹԸԸԸ)

## ԱՆԱՆԻ ՅԱՏՈՒԿ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ ԱՅՅԵԼԵՑ ՊԸՐՐԻԻ ԵՒ ՇԸՍԻ

ՄԱԿԻ ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի յատուկ պատգամով, Միջին Արեւելքի խաղաղության գործընթացի հարցերու ՄԱԿի ներկայացուցիչ թերի Ռոս Լարսըն երկէ Դամասկոս մեկնելէ առաջ այցելութիւններ տուաւ իտիւրքարարանի նախագահ Նեպիի Պրոքորի եւ վարչապետ Սէյիւմ Հըսի:

ՊԸՐՐԻԻ ԷՅՑ  
Խորհրդարանի նախագահին հետ իր ունեցած տեսակցութեանն էտք, Լարսըն յայտարարեց, որ ներկայացուցած է ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի եւ Իսրայէլի արտաքին գործոց նախարար Տէյվիտ Լէւիի ժընեւի մէջ տեղի ունեցած հանդի-

պումին արդիւնքները: «ՄԱԿի ընդհանուր քարտուղարը ոչ մէկ որոշում պիտի տայ, մինչեւ որ իսրայէլեան կառավարութիւնն պաշտօնական փոխանցում ստանայ հարաւային Լիբանանէն իր ուժերու հեռացումին մասին», վերահաստատեց Լարսըն, աւելցնելով, որ շատ կանուխ է մեկնաբանութիւններ ընելու այս հարցին մասին:

## ԳԵՒԵԼԻՉԱՍԷ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ

### ՌՈՒՍԻԱ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՄԷԶ

Ագրպէյճանի նախագահ Հայտար Ալիբեի նախկին խորհրդական Վաֆա Կիւլիգատէ թուրքիան զգուշացուց, թէ Չեչենիոյ պատերազմէն ետք, Ռուսիա իր ուշադրութիւնը պիտի կեդրոնացնէ Կովկասի վրայ, զի խաւորաբար Ագրպէյճանի եւ Վրաստանի վրայ, ուր պատերազմ պիտի հրահրէ:

Թրքական «Զաման» օրաթերթին թղթակիցին հարցումներուն պատասխանելով, Կիւլիգատէ ըսաւ, որ Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման համաձայնագիր պիտի չստորագրուի, եւ թէ կան «խաղաղութիւն ուղղորդող մաքրագործելու ծրագիրներ»: «Տաջուր մահափորձի ենթարկուողը պիտի ըլլայ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան, որ այս պատճառով խուսափեցաւ խաղաղութեան համաձայնագիր մը կնքելէ», ըսաւ ան:

Կիւլիգատէ թուրքիոյ կոչ ուղղեց՝ անտարբեր չմնալու Ղարաբաղի յաջող պատերազմին ժամանակ, ինչպէս անցեալին անտարբեր մնաց եւ մեծ կորուստ ունեցաւ:

Կիւլիգատէ ըսաւ, որ եթէ Լեռնային Ղարաբաղի պատերազմը վերսկսի, Պաքոս - ձկնահամ քարտուղարութիւնը ծրագիրը քննարկելու ինչո՞ւ ինչպէս նաեւ թուրքմենական կազմակերպիչ ծովու վրայով պիտի չփոխադրուի: Ան նաեւ մտաւարկութիւն յայտնեց, որ եթէ խաղաղութեան համաձայնագիր մը չկնքուի, ապա ժողովուրդը իր դիմադրութիւնը պիտի արտայայտէ եւ պատերազմ պիտի պայթի: «Ագրպէյճան կրնայ պարտութեան մատնուիլ, որովհետեւ հակառակ անոր որ հայկական բանակը աւելի տկար է, այսուհանդերձ Ռուսիա պիտի սժանդակէ Երեւանի», աւելցուց ան:

## «ԹԸՐԲԻՇ ՏԵՅԼԸ ՆԻՈՒԶ»Ի ՀԱՄԱՐՈՒՅԻՆ

### ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԱՌԱՋԱԴՐԵ ԵԼԶԻՊԵՅԻ ԹԵԿՆՈՒԹԻՒՆԸ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Ագրպէյճանի նախկին նախագահ Ալուվիքի Էլչիպէյ թուրքիա իր այցելութեան ընթացքին կառավարական ընկերակցութեան Ալգայնական Գործի կուսակցութեան վարակցութիւնը կը վայելէ. կը հաղորդէ «Թըրքիշ Տէյլի Նիուզ» օրաթերթը: Նշեալ կուսակցութեան անդամ չորս նախարարներ Էլչիպէյի այցելած են՝ հիւանդանոցին մէջ: Ալգայնականի մէջ իբրեւ Ալիեւի յաջորդը անոր հաւանական թեկնածութիւնը առաջ մղելու առաջադրութեամբ:

Էլչիպէյ, որ անցեալ շաբաթ թուրքիա փոխարձակած է Ալգայնական Գործի կուսակցութեան անդամ երեսփոխան Մեհմէթ Ճէյլիանի անձնական օդանաւով, ընդունուած է փոխադրամիջոցներու նախարար Էնիս Օքսուպի կողմէ, որ նոյնպէս նշեալ կուսակցութեան անդամ է եւ պայն ընդունած է իբրեւ «հին բարեկամ մը»:

Հարցը լուսարձակներէ հեռու պահելու առաջադրութեամբ, ռեւէ պաշտօնատար չէ արտայայտուած Էլչիպէյի այցելութեան մասին՝ անոր թուրքիա ժամանումէն ի վեր: Կարգ մը աղբիւրներու համաձայն, փոխ վարչապետը Ալգայնական Գործի կուսակցութեան ղեկավար Տէյլիք Պահչէլի Երկուշաբթի օր այցելած է Էլչիպէյի՝ հիւանդանոցին մէջ: Անոր այցելած են նաեւ նշեալ կուսակցութեան այլ անդամներ, ներառեալ՝ առողջապահութեան, պաշտպանութեան, փոխադրամիջոցներու նախարարները եւ պետական նախարար մը: (Թ. Տ. Ն.)

## ՍՈՒՐԻԱ ԶՕՐԱՎԻՔ ԿԸ ԿԱՆԳՆԻ ԻՍՐԱՅԵԼԻ ԴԷՄ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ

ԿԸՍԵ ԿԱՍՏԱՄ

Սուրիոյ փոխ նախագահ Ապտէլ Հալիմ խոստում տեսակցութիւն ունեցաւ պաղեստինեան էՖ. Փէ. Էլ. Փէ. արմատական շարժումի ղեկավար Ժորժ Հապաշի հետ, որուն յայտնեց, որ Դամասկոս կը շարունակէ գործակից կանգնելու Իսրայէլի դէմ պաղեստինեան պայքարին:

ԷՖ. Փէ. Էլ. Փէ. մաս կը կազմէ Դամասկոս հաստատուած արմատական խմբակներուն, որոնք կը մերժեն ՊԱԿ - Իսրայէլ խաղաղութեան գործընթացը, որ պաղեստինցիներուն սահմանափակ ինքնավարութիւն մը տուած է Կազախի եւ Այսրյորդանանի մէջ:

ԷՖ. Փէ. Էլ. Փէ. ի բանբեր Մահմադ Թահթար ըսաւ, որ խոստում վերահաստատած է Սուրիոյ գորակցութիւնը պաղեստինցի ժողովուրդին արդար պայքարին եւ ինքնորոշման իրաւունքին: Թահթար աւելցուց, որ Սուրիա գործակից կը կանգնի նաեւ պաղեստինեան անկախ պետութիւն մը հռչակելու իրաւունքին:

Թահթար, որ ներկայ եղած էր խոստում - Հապաշ հանդիպումին, աւելցուց, որ էՖ. Փէ. Էլ. Փէ. ի ղեկավարը ընդգծած է կարեւորութիւնը պաղեստինցի գաղթականներուն տունդարձին: Այս ուղղութեամբ, համաձայնութիւն գոյացած է միացեալ ճիգերով քննարկել գաղթականներու վերադարձի հարցը:

Հապաշ - խոստում հանդիպումէն առաջ «Թըրքիս» օրաթերթը կոչ ուղղած էր՝ կարեւորութիւն տալու հարկը հազարաւոր պաղեստինցի գաղթականներու, որոնք հարաւային Լիբանան կը գտնուին եւ որոնց ճակատագիրին մասին հարցականներ պիտի գծուին, երբ իսրայէլեան ուժերը հեռանան Լիբանանէն:

(ՌՅԹԸԸԸ)

## ԵՒՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇԵՑ ԱՌԿԱԽԵԼ ՌՈՒՍԻՈՅ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Եւրոպայի խորհուրդը երկէ որոշեց առկախել Ռուսիոյ անդամակցութիւնը, ինչպէս նաեւ արագ քայլերու դիմել Չեչենիոյ մէջ իր մարդկային իրաւանց մարզի բարելաւելու համար:



Տաղստանի պատուիրակը, որ ռուսական պատուիրակութեան մաս կը կազմէր, իր խօսքին պահուն:

Ռուսական պատուիրակութեան նախագահը՝ Տմիթրի Ռուկոպին ցաւ յայտնեց որոշումին համար: Ոչ մէկ երկրի անդամակցութիւնը առկախելու է խորհուրդին 51 տարուան պատմութեան մէջ: Խորհուրդին համաձայն, Ռուսիա ոտնակոխած է Մարդկային Իրաւանց Եւրոպական Ուժերի յոյուսածները:

Խորհուրդը եր անգամ երկիրներու կառավարութիւններէն պահանջեց Յուրիսին տեղեկագրել, ըսելով, որ անոնք պէտք է սկսին առկախման գործընթացին, եթէ Ռուսիա անմիջապէս չբարելաւ Չեչենիոյ մէջ մարդկային իրաւանց մարզը:

ՌՈՒՍ ՈՍՏԻՎԱՆՆԵՐՈՒ ԿԱՐԱՒԱՆ ՄԸ ՅԱՐԶԱԿՈՒՄԻ ԿՆՆԹԱՐԿՈՒԹԻ

Ռուս բանակայիններ Հինգշաբթի օր խոստովանեցան, թէ Չեչենիոյ մէջ ըմբոստները դարձեալ յարձակում գործած են ոս-

## ՀԱՅԱՍՏԱՆ - ՌՈՒՄԱՆԻԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՇԽՈՒԺԱՅՈՒՄ



Քոչարեան ծաղկեպսակ կը գտնուէ Աճառօք Զինուորի յուշակոթողին վրայ:

Նախագահ Ռոպէրթ Քոչարեան, որ պաշտօնական այցելութեամբ Ռումանիա կը գտնուի, երկէ նախագահ Ըմիլ Բոնսարսթիսեպուի հետ ստորագրեց միացեալ յայտարարութիւն մը, կատարուած բանակցութիւններուն վերաբերեալ:

Քոչարսթիսեպու յայտնեց, որ Ռումանիա - Հայաստան համագործակցութիւնը պէտք է վարգանայ: Պէտք է փոխադարձ դիւրութիւններ ընծայել անուտրական մարպին մէջ, քաջալերել խառն ընկերութիւններու ստեղծումը, Ռումանիոյ անուտուրի պատու գօտիները օգտագործել իբրեւ հիմք, Հայաստանի եւրոպական շուկաներ հասնելու համար:

Նախագահ Քոչարեան ընդգծեց անուտրատանտական կապերուն եւ երկկողմանի յարաբերութիւններուն մէջ եւրոպական չափանիշները նկատի ունենալու անհրաժեշտութիւնը:

Նախագահ Քոչարեան նշեց, որ 2001ին Ռումանիա պիտի դառնայ ԵԱՀԿի նախագահը, ինչ որ իր կարեւորութիւնը կրնայ ունենայ դարաբաղեան տագնապի լուծման մէջ: «Այս ուղղութեամբ, խառն ընկերութիւններու ստեղծումը, Ռումանիոյ անուտուրի պատու գօտիները օգտագործել իբրեւ հիմք, Հայաստանի եւրոպական շուկաներ հասնելու համար»:

## ՍԻՐԱԴԵՂԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍԱԸ ՅԵՏԱԶԳՈՒԵՑԱՄ

Երեւանի Մալաթիա - Սեբաստիա համայնքներու առաջին ատեանի դատարանին մէջ ընթացող 228 վարչութեան նախագահ Վանո Սիրադեղեանի, ներքին գործերու վարչութեան նախկին նրամանատար Վահան Յարութիւնեանի եւ միւս 10 անբաւարարութեան դատավարութեան երկկողմանի խտրականութեան, որովհետեւ Սիրադեղեան բացակայեցաւ: Յաջորդ նիստը պիտի կայանայ 13 Ապրիլին:

Սիրադեղեան նախորդ նիստէն ալ բացակայած էր: Դատարանի որոշումով, ներքին գործոց նախարարութեան աշխատակիցները պիտի փորձեն գտնել Սիրադեղեանը: Տարբերակներու կարծիքով, պէտք է անջատել Սիրադեղեանի գործը եւ առանց ձգձգումներու լսել մնացածը: Սակայն Վահան Յարութիւնեանի պաշտպան փաստաբան Ռուբէն Պալապանեանի կարծիքով, Սիրադեղեանի գործին անջատումը պիտի վնասէ իր իբրեւ պաշտպան փաստաբանի մարտավարութեան:

● ԶԱՅՆԱՄՓԻՒԻՒԻ «Ազատութիւն» կայանէն առնելով իր տեղեկութիւնները «Նորաթերթ» օրաթերթը երկէ հաղորդեց, որ Սիրադեղեան ինքնաշարժով վրաստան անցած է:

## ԲԱՆԱԿԸ ԿԵՐՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

### ՌՈՒՐՔԻԱ ՊԻՏԻ ՕԺԱՆԴԱԿԻ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ

Թուրքիոյ ցամաքային ուժերու հրամանատար գործադար թուրքիոյ յայտարարեց, թէ թուրքիա պիտի շարունակէ սօսանդակել Ագրպէյճանի՝ բանակը կերտելու: Թուրքիոյ Պաքոսի մէջ տեսակցութիւն ունեցաւ Ագրպէյճանի պաշտպանութեան նախարար Մաֆար Ապիբեի հետ: Ապիբե, իր կարգին, ըսաւ, որ թուրքիոյ եւ Ագրպէյճանի միջեւ գիւնդակայան մարզի յարաբերութիւնները պիտի շարունակուին:







ԳԻՏԱԺՈՂՈՎ

« 21ՐԴ ԴԱՐԸ ԱՌԱՆՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ »

Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի կազմակերպությամբ 18-ին 21 Ապրիլին Հայաստանի մեջ տեղի պիտի ունենայ «21րդ Դարը Առանց Ցեղասպանությունների» խորագիրով գիտաժողովը...

ԱՊՐԻԼ 18, 2000
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԲԱՅՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ՆԻՍ

- ԲԱՅԻՄԻԱՆ ԽՕՈՒԲ ԳԱՏԻՅ ՍԱՐԳՍԵԱՆ
Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ

- ՈՐՈՊԵՆԻ ԻՌՊԵՆԻ ԲՈՉԱՐԵԱՆ
Հայաստանի Հանրապետության նախագահ

- ՈՐՈՊԵՆԻ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՈՒՆ Բ.
Ամենայն հայոց կաթողիկոս

Չեկուցողներ

- ԳԱՆՈՒՍ ԳԱՆՈՅԵԱՆ
Հայոց Ցեղասպանության ճակատագրական հետևանքները:

- ԼԱԿՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂԵԱՆ
Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը 20րդ դարի երկրորդ կեսին:

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍ

Նախագահող՝ ԳԱՆՈՒՍ ԳԱՆՈՅԵԱՆ
Չեկուցողներ

- ՍՏԵՓԱՆ ԴՕՂՈՍԵԱՆ
Հայոց Ցեղասպանության պարբերական հարցի շուրջը:

- ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ
20րդ դարի առաջին ցեղասպանությունը եւ պատմության դասերը:

- ԼԵՆԻՆԻՍ ԶՈՎԷՆԻՍԵԱՆ
Հայերի Ցեղասպանության դատապարտման ռազմավարությունը:

- ԱՐՄԷՆ ԱՅՎԼԱԶԵԱՆ
Ազգային բնաշնչման օսման ակադեմիայի ակադեմիկոս Գաղափարական, հանրակարգային եւ հոգեբանական արժանատիքները եւ մեքանիզմը՝ ըստ 1720ական թուականների աղբյուրների:

- ԱՐՄԷՆ ԱԽԱԳԵԱՆ
Հայոց Ցեղասպանության իրականացման թուրքական որոշումների մեքանիզմները:

- ՊԱՆԻՆ ԶՈՐԱՆԵԱՆ
Ցեղասպանության վտանգի կանխատեսումը հայ գործիչների կողմից 18րդ դարի երկրորդ կեսին:

- ԼՄՄԱ ԿՈՍՏԱՆԳԵԱՆ
Արեւմտահայությունը 1895-1896 թուականներին եւ Մկրտիչ Խրիսեանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՊՐԻԼ 19

Նախագահող՝ ՀՐԱԶԻԿ ՍԻՄՈՆԵԱՆ

Չեկուցողներ

- ԲԱՐԳԷՆ ԶԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
Սպեր - Բարբերդի բնակչության ազգագրական պատկերը 16-17րդ դարերում եւ 1915 թուականին:

- ԳԱՅԻԱՆԻՆ՝ ՄԱՍՆՈՒՐԵԱՆ
Ընկերային - տնտեսական ինչպիսի բնագավառներում ետ մնալը նպաստեց 20րդ դարի ցեղասպանության գործողություններին: 1912-1915 թուականների, արեւմտահայերի ու արցախեան միատրամ իրողությունների փորձը:

- ԱԶԱՏ ՀԱՄԲԱՐԵԱՆ
Հայ հասարակական-քաղաքական ուժերի դիրքորոշումը 1915ին կոտորածների նախօրեակին:

- ՌՈՊԵՆԻ ԹԱԹՅԵԱՆ
Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակին օսման եւ թուրքալուսի ապրող հայ բնակչության թուաքանակի հարցը թուրքական պատմագրության մեջ:

- ԼՈՒՍԻՆԻՆ՝ ԱՄԻՐՋԱՆԵԱՆ
Օսմանեան թուրքիայի խորհրդարանի 1918 թուականի նոյեմբեր - Դեկտեմբեր ամիսների նիստերը եւ հայ երեսփոխանները:

- ՄԵՆԻՆԻՆ՝ ԱՆՈՒՄԵԱՆ
Հայերի տեղահանությունը եւ կոտորածները կազմակերպողների դատական հարցաքննությունների վաւերագրերի մասին:

- ԼԻԼԻԹ՝ ԱՍԱՏՐԵԱՆ
Ցեղասպանության հետեւանքով հայ ժողովրդի կրած նիւթական կորուստների փոխհատուցման հիմնախնդիրները:

ԸՆԳՄԻՋՈՒՄ

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍ

Չեկուցողներ

- ՎԵՐԻՆԻՆ՝ ՍՎԱԶԼԵԱՆ
Մեծ եղեռնից վերապրողների վկայությունները որպէս պատմափաստագրական վաւերագրեր:

- ՄՂԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Հայոց 1915-1916 թուականը Ցեղասպանության պատմագրության ակունքներում:

- ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ
Հայոց Ցեղասպանությունը եւ հայ եկեղեցին 1915 - 1918 թուականներին:

- ՂԱՐԳ ԱՐԱՋԵԱՆ
Հայոց Մեծ եղեռնը եւ Աւետիք Իսահակեանը:

- ԷՎՈՒՆԻՆ՝ ՄԵԼԻՔԱՆԵԱՆ
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության որբախնամ գործունէությունը 1910 - 1930ական թուականներին:

- ԲՆԱՐԿՈՒՄ ԱԽԱԳԵԱՆ
Ամերիկահայերը Հայոց Ցեղասպանության տարիներին:

- ԱՄԱՏՈՒՆԻՆ՝ ՎԻՐԱՊԵԱՆ
Սփիւռքահայության դերը Հայկական Հարցի վերաբարձրացման գործում 1945-1947 թուականներին:

- ՆՈՒՆԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ
Հայկական հարցի բարձրացումը ՄԱԿի եւ մեծ տէրությունների առջեւ 1945-1947 թուականներին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՊՐԻԼ 20

ՇԵՆՏԵՐՈՐԴ ՆԻՍ

Նախագահող՝ ՎԱՐԳՅԱՆ՝ ՄԻՔԱՅԻԼԵԱՆ

Չեկուցողներ

- ԱՇՈՏ ՄԵԼԻՔԱՆԵԱՆ
Հայկական կոտորածները Ախալքալաքի գաւառում 1918, 1921 թուականներին:

- ԿԱՐԷՆ ԽԱԶԱՏՐԵԱՆ
Քննարկականների վարչապետները Հայաստանի բռնագրաւում շրջաններում (1920-1921 թուականներին):

- ՄՈՒՐԱՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Խնքնապաշտպանական կոնցերտը եւ հայ կամաւորները:

- ԿԱՐԱՊԵՏ ՋԻՆԳՈՋՅԵԱՆ
1894-1896 թուականների հայկական կոտորածները եւ պոլկարական պատմագրությունը:

- ՎԱՐԿՅԱՆ՝ ՄԻՔԱՅԻԼԵԱՆ
Հայոց Ցեղասպանությունը Հայնրիխ Ֆիրպիլերի վերլուծությանը:

- ՋՈՂՐԱՊ ՂԱՍԱՊԵԱՆ
Մեծ եղեռնի արձագանքները Պոլկարալում:

- ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔԱՆԵԱՆ
Մոկսի հայկական կառավարությունը (1915ին Մալխա - Յուխա):

- ԱՐՇԱԿ ԹՈՎՄԻՍԵԱՆ
Թուրքիայի կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչման մի քանի դրոշմներ:

ՎԵՅԵՐՈՐԴ ՆԻՍ

- ԼԻԼԻԹ՝ ՅՈՎԷՆԻՆԻՍԵԱՆ
Եղեռնը եւ Համաձայնության երկրների դիրքորոշումը 1915-1916 թուականներին:

- ՆԻՐՈՒԱՅ ԶՈՎԷՆԻՍԵԱՆ
1915ին Հայոց Ցեղասպանության հիմնահարցերի լուսաբանումը արաբական պատմագրության մեջ:

- ԱՐՏԵՄ՝ ՕՂԱՆՋԱՆԵԱՆ
Հայկական հարցը, Աւստրո - Հունգարիայի եւ Գերմանիայի դերը:

- ՆՐՈՒԱՆԿ ԳԱՍՊԱՐԵԱՆ
Ֆրանսան եւ Մեծ եղեռնի քարոզչությունը (1915 - 1918 թուականներին):

- ՏԻԳՐԱՆ ԶԱՔԱՐԵԱՆ
1915-1916 թուականներին Հայոց Ցեղասպանության լուսաբանումը Մ. Նահանգների մամուլում:

- ՏԻԳՐԱՆ ՍԱՐՈՒՆԵԱՆ
Հայոց Ցեղասպանության միջազգային իրաւական պատասխանատուությունը եւ Մեծ Բրիտանիան 1915-1923 թուականներին:

- ԻՌԻՆԻՆ՝ ԳԱՍՊԱՐԵԱՆ
Կիլիկիայի հայերի կոտորածները 1915 - 1916 թուականներին:

- ՍԱՄՍՈՆ ԲԱՆԻՆԵԱՆ
Հայկական Հարցը Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՊՐԻԼ 21

ԵՕՅԵՐՈՐԴ ՆԻՍ

Նախագահող՝ ՀՐԱՆԿ ԱԻԵՏԻՍԵԱՆ

- ՆՈՒՆԻՅՐ ՍԱՐՈՒՆԵԱՆ
Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսեանը եւ Հայոց Ցեղասպանության հիմնախնդիրների ուսումնասիրությունը:

- ՎԱԼԵՐԻ ԹՈՒՆԵԱՆ
Հայոց Ցեղասպանությունը եւ ռուսական մամուլը 1915-1917 թուականներին:

- ՌՈՊԵՆԻՆ՝ ԲԱՂՎԱՍԱՐԵԱՆ
Հայոց Ցեղասպանության արձագանքները մոսկովեան «Իսքրի» շաբաթաթերթի էջերում (1914-1915 թուականներին):

- ՄԻՔԱՅԻԼ՝ ՄՈՒՐԱՏԵԱՆ
Հայոց Ցեղասպանության արձագանքները Մ. Մ. Բովալեյսկու աշխատություններում:

- ԱՐՄԷՆ՝ ՄԱՐՈՒՆԵԱՆ
Թուսաստանը եւ 1915 - 1916 թուականների Հայոց Ցեղասպանությունը. քաղաքական մտեցումներ եւ դիրքորոշումներ:

- ՌՈՒՐԷՆ՝ ԱԼԿԵԱՆԵԱՆ
Մարտական գործողությունները կոկասեան ռազմաճակատում 1914ին Հոկտեմբեր - 1915ին Յուճուար ամիսներին:

- ԱԻԵՏԻՍ ԶԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
Հայոց Մեծ եղեռնը եւ հայ գաղթականությունը:

ԸՆԳՄԻՋՈՒՄ

ՈՒԹԵՐՈՐԴ ՆԻՍ

- ՀՐԱՆԿ ԱԻԵՏԻՍԵԱՆ
Եղեռնը եւ հայկական պետականության վերականգնման գաղափարը 1915-1918 թուականներին:

- Նախողի նախագահողներ՝ Գ. Գալուսեան, Հ. Երանյան, Վ. Միքայելյան եւ Հ. Աւետիսեանի հաղորդումները գիտաժողովի արդյունքների մասին:

- Լ. ԲԱՐՍԵՂԵԱՆ
Գիտաժողովի մասնակիցների յայտարարությունն ուղղուած միջազգային հանրությանը - 21րդ դարը Առանց Ցեղասպանությունների - ճշանաբանով:

- ՓԱԿՄԵԱՆ ԽՕՈՒԲ ԳԱՏԻՅ ՍԱՐԳՍԵԱՆ
Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ

- Պատուոգրերի յանձնում Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանության ուսումնասիրության բնագաւառում ճշանակալի ներդրում կատարած հայ եւ օտարերկրեայ գիտնականներին եւ կազմակերպություններին:

«ԱՆԹԻԼԻԱՍԻ ՈՒԽՏԻ ՕՐ»Ը

Ս. Գրիգոր Լուսաւորչի Մուսն ի Վիրապի տօնին՝ «Անթիլիաւսի Ուխտի Օր» ռուսական թոլ. Անթիլիաւսի Մալք տաճարին մէջ տեղի պիտի ունենան հետեւեալ արարողութիւնները. -

ա. - Շաբաթ, 8 Ապրիլ, առաւօտեան ժամը 9:30ին Ս. պատարագ:

բ. - Նոյն օրը, երեկոյեան ժամը 7:00ին, հսկումի արարողութիւն ի պատրաստութիւն յաջորդ օրուան ուխտաւորութեան:

գ. - Վիրապի, 9 Ապրիլ, սուրբ Եւանման պատարագ, որուն պիտի հետեւի Ս. Գրիգոր Լուսաւորչի Բիւզունի վիճակի Մալք տաճարին շրջափակին մէջ, մասնակցութեամբ Միաբան Հայրերուն եւ քահանայից դասուն:

Պիտի պատարագ եւ պիտի քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ՍԵՊՈՒՀ

ԵՊՍԿ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Արարողութեանց եւ թափօրին պիտի նանդիսայետէ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ժամերգութիւն ժամը 8:30ին


Պատարագ ժամը 10:00ին

Քարոզ ժամը 11:00ին

Ս. Աջերուն եւ ալ մասունքներու թափօր ժամը 11:30ին

ՀԱԿՈՒՄ ԵՒ ԱՐԵՒԱԳԱԼ ՀՈԳԵՒՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՄԵՐԳ
Ա. ՀՈԳԵՒՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ. Ս. Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր դաստիարակութեան ծրագրի.
- Ղեպի թռչնոց Բոյն - Հոգեւոր յայտագիր:
- Վերադարձիմ՝ ուխտի եւ աղօթքի պահ Ս. Գրիգոր Լուսաւորչի Մալք տաճարին մէջ՝ Կաթողիկոսարանի Ուխտի Օրուան առիթով:
- Շաբաթ, 8 Ապրիլ 2000: Մեկնում՝ Ս. Յակոբ եկեղեցին առաւօտեան ժամը 8:30ին: Արձանագրութեան եւ մանրամասնութեանց համար հեռաձայնել 01-564463, 01-449926 թիւերուն:
Բ. ԱՐԵՒԱԳԱԼ. Հրամարիմք. - Չորեքշաբթի, 12 Ապրիլ 2000.
7:15 - Առաւօտեան ժամ - Ապաշխարութեան շարակներ.
7:30 - Արեւագալ - Կատարողութեանը՝ Չաթալաչեան - Թորոսեան վարձարանի աշակերտական երգչախումբին:
8:30 - Հրամարիմք
8:45 - Կը քարոզէ՝
ՀՈԳԵՒ. Տ. ՎԱՐԱԳ ԱՐԵՂԱՅ ԹՕՓԱԼԵԱՆ:
Գ. ՀՈԳԵՒՈՐ ՀԱՄԵՐԳ. Ս. Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր դաստիարակութեան ծրագրի.
Ուրբաթ, 14 Ապրիլ 2000, երեկոյեան ժամը 8:30ին Ս. Յակոբ եկեղեցւոյ «Տիրան Պապիկեան» սրահին մէջ:
Կատարողութեանը՝ «Օրհներգ»ի Մեծակատարուհի՝ ՍԱԼԲԻ ԶԵԼԵՅԵԱՆ
Մուտք 5000 Լ. Ո.
Հասոյթը ամբողջութեամբ Չաթալաչեան - Թորոսեան վարձարանի Չջաւոր Մանրու ֆոնդին:
ԹԱՂԱՅԵԱՆ ԹՈՂԱՅԻՐԿ Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ

# ԵՐՐՈՊԱ ԿԵ ՀԱՍՆԻ ԽԱՉՍԵՐՈՒԿԻ ՄԸ



Վերջին 50 տարիներում Երրոպա եղած է միջազգային համակարգի ձգողական կենտրոնը: Այսօրվան Երրոպայի երկիրները (Փորթուգալ, Սպանիա, Անգլիա, Ֆրանսա և Հոլանդա) տիրեցին աշխարհի սեփական վրայ: Անոնք նախապես մեկուսի եղող շրջաններին ստեղծեցին սեփական համակարգ եւ այսպիսով Երրոպան հանդիսացաւ այլ համակարգի խաչմերուկն ու իրաւարարը:

Անցնող դարաշրջանի անձնակազմը իրադարձութիւնը, սակայն, Երրոպայի թագաւորական համակարգի փլուզումն էր, որ պատահեցաւ 20րդ դարու առաջին կիսուն՝ երկու Աշխարհամարտերուն իբրեւ հետեւանք: Համաշխարհային ուժի հանգամանքը այսպիսով փոխանցուեցաւ երկու կիսաերոպայական պետութիւններուն՝ Միացեալ Նահանգներուն եւ Խորհրդային Միութեան: Պաշտպանութեան տեսլանքը դարձաւ Միութեան պարտութեանը Միացեալ Նահանգներ հանդիսացան միջազգային համակարգին կեդրոնը:

Յառաջիկայ տասնամեակին, ինչպէս նաեւ ամբողջ դարուն ընթացքին Երրոպան երկու հարցեր ունի դիմագրաւելիք, առաջին՝ Միացեալ Նահանգներուն ներկայացուցած հսկայական ուժին հետ իր յարաբերութիւնները, եւ երկրորդ՝ երրոպայական երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնները:

### ԳԵՐԱՆՆԻԱՆ ԻՐԵՒ ԱՆԿԻՄԱՔԱՐ

Երրոպա իր պարտութիւնը դիմագրաւեց երկու հանգրուաններով: Պաշտպանութեան ընթացքին անհկա զրաւուեցաւ Միացեալ Նահանգներուն եւ Խորհրդային Միութեան կողմէ, որոնցմէ իւրաքանչիւրը թափ տուաւ տնտեսական, քաղաքական եւ գիտութեամբ բազմազգի խմբակցութիւններու զարգացման: Երրոպայի կրեւմտեան բաժինը՝ Երրոպայական Միութիւնը, բաւական յաջող դուրս եկաւ, իսկ Արեւելեան բաժինը՝ ԲՆՄԻՔՕՏ, չափազանց ձախող: Եւ Խորհրդային Միութեան փլուզումէն ետք Արեւմտեան զարգացումը ալ անլիշ շեշտուեցաւ:

Խորհրդային Միութեան քայքայման հետեւանքներէն սէկը եղաւ Կերմանիոյ վերամիացումը, որ գոնէ վերջին դարու ընթացքին, նախանշան հանդիսացած է պատերազմի մը պայթումին: 1871 ի. 1914 ի. եւ 1939 ի. պատերազմներ տեղի ունեցան՝ իբրեւ հետեւանք Միացեալ Կերմանիոյ ստեղծած աշխարհաքաղաքական պայսմաններուն: Միացեալ Կերմանիան շատ խոցելի դիրք մը ունի Արեւելք - Արեւմուտք առանցքին վրայ, ինքզինք անապահով կը զգայ արեւմտեան (ինչպէս՝ Ֆրանսան) կամ արեւելեան (ինչպէս՝ Խորհրդային Միութիւնը) ուժի մը յարձակման դիմաց, հետեւաբար կը նախընտրէ ինք սկսիլ պատերազմը իր ուզած ժամանակ, յուսալով, որ թշնամիներէն սէկը պարտութեան մատնելէ ետք պիտի կարենաւ ինձու պահել երկրորդը կամ դարձեալ պարտութեան մատնել:

զայն: Այս ուղղութիւնները յաջողեցաւ 1871 ի. սակայն ձախողութեան մատնուեցաւ 1914 ի եւ 1939 ի պատերազմներուն: Հիմա, որ Կերմանիան դարձեալ վերամիացած է, արդեօք այս վերամիացումը պատճառ պիտի ըլլայ այլ պատերազմի մը սկսման:

ՕԹԱՆԻ եւ Երրոպայական Միութեան առաջին գործը Երրոպան գիտութեամբ եւ տնտեսապէս զօրացնելն էր՝ կարենալ յէս դնելու համար Արեւելքէն եկող որեւէ վտանգի: Սակայն Խորհրդային Միութեան փլուզումէն եւ Կերմանիոյ վերամիացումէն ետք անոնք մոր դեր մը ստանձնած են՝ բարգաւաճման եւ ապահովութեան մը ընդհանրութիւնը ստեղծելով վերացնել Կերմանիոյ անապահովութեան զգացումը եւ «հետեւաբար» յարձակման մը ենթակուելու անոր վախը:

Առաջին հերթին ՕԹԱՆԻ իր կատուցէն ներս առաւ Ֆրանսան եւ Լիթուանիան, որպէսզի անոնք դաշնակցին Կերմանիոյ հետ եւ այսպիսով չէզոքանալ Կերմանիոյ անապահովութեան հիմքը հանդիսացող վտանգի զգացումը: Իսկ Երրոպայական Միութիւնը իր կարգին ծրագրած է զարգացնել Երրոպայի, որուն շնորհիւ նաեւ Կերմանիոյ տնտեսութիւնը, որպէսզի այսպիսով Կերմանիա շահագրգռուած ըլլայ Երրոպայի միւս երկիրներուն հետ համագործակցելու, այսպիսով չէզոքացած կ'ըլլայ վերջին դարու ընթացքին երրոպայական պատերազմներու գըլ-խաւոր պատճառին հիմքը: Այսպիսով, երեւութապէս ոչնչացուած են միջերոպայական տագնապներ յարուցող գլխաւոր պատճառները:

Սակայն կան հարցեր, որոնք լուրջ մարտահրաւրէրներն պատճառ կրնան հանդիսանալ յառաջիկայ տասնամեակներուն: Առաջինը՝ Կերմանիան պաշտպանելու նպատակով Իուսիոյ դէմ դնելու ՕԹԱՆԻ եւ Կերմանիոյ՝ երրոպացի դաշնակցներուն պատրաստակամութիւնն է, իսկ երկրորդը՝ թէ արդեօք Երրոպայական Միութիւնը պիտի յարմարեալ համահաւասար շահ ապահովել բոլոր երրոպայական երկիրներուն, կամ կրնա՞յ զայ ժամանակ մը, երբ կարգ մը երկիրներ, ներառեալ Կերմանիան, իրենց համար անլի նպաստաւոր պիտի համարեն դուրս գալ Երրոպայական Միութենէն:

### ԵՐՐՈՊԱՅԻ ՆՈՐ ՈՍՉՍԱՎԱՐԱԿԱՆ ՄՅՈՒՆՈՒՄՆԵՐ

Լ'ստ երեւոյթին, Իուսիա շատ վճռական է իր հողային ամբողջականութիւնը պահպանելու հարցին մէջ: Սակայն 2-էն ճիշդ վրայ հակակշիռը պահելը կը պահանջէ ոռոսական ազդեցութեան հաստատումը նաեւ վրաստանի վրայ: Իուսի յառաջիկայ տասնամեակին կ'ակնկալուի, որ Իուսիա զանազան միջոցներով փորձէ հասնիլ նախկին Խորհրդային Միութեան սահմանները: Ասիկա երեք հարցեր կը ստեղծէ Երրոպայի համար: Առաջին՝ ոռոսական բանակը այսպիսով կը վերադառնայ դէպի լեհական սահմանը, երկրորդ՝ Իուսիա պիտի փորձէ վերաշահիլ Պալթեան երկիրները, եւ երրորդ՝ եթէ

Ուրբանիա որոշէ վերադաշնակցիլ Իուսիոյ հետ, ոռոսական ուժերը պիտի տեղադրուին Կարպատեան լեռներուն վրայ՝ դէմ յանդիման գտնուելով ՕԹԱՆԻ անդամ Հուն գարիոյ եւ այլ երրոպայական երկիրներուն: Այս բոլոր շարժումները յատկապէս լեհական սահմանի վրայ վտանգ կը սպառնան Կերմանիոյ, որովհետեւ լեհական սահմանը նաեւ Կերմանիոյ արեւելեան սահմանն է:

ՕԹԱՆԻ կ'ընդլայնի առանց մասնաւոր ուշադրութիւն դարձնելու գիտութեամբ նկատառումներու վրայ: Եթէ ոռոսները վերադառնան Լեհաստան, ո՞վ պիտի պաշտպանէ զայն: Միացեալ Նահանգներ պատրաստակամութիւն ցոյց չեն տար այդ մէկը ըմբելու: Ֆրանսան եւ Լիթուանիան կրնան մասնակցիլ զօրք տեղադրելով հոն, սակայն՝ ոչ պէտք եղած քանակութեամբ, ուստի, Կերմանիան գրեթէ առանձին կը մնայ:

Լիւս կողմէ, սակայն, անկախ Կերմանիոյ հետապնդած նպատակներէն, Երրոպան շատ հաշտ չաքով պիտի չդիտէ Կերմանիոյ մէջ զինուորական ուժի կուտակումը, որ կրնայ տուն տալ ոռոսական ուժի կուտակման եւ հետեւաբար՝ հաւանական պատերազմի մը նախապատրաստութեան: Երրոպա պիտի փորձէ զսպել Կերմանիան, որ իր կարգին անլի մեծ օգնութիւն պիտի պահանջէ Ֆրանսայէն եւ Լիթուանիայէն եւ ասիկա յարուածութիւն մը պիտի ստեղծէ երրոպայական երկիրներուն միջեւ:

### ԵՐՐՈՊԱՅԻ ՈՉ ՀԱՍԱՎԱՐՈՒՄԸ ՎԻՃԱԿԸ

Յառաջիկայ տասնամեակի գլխաւոր միջոց պիտի ըլլայ տնտեսական ապահովագրութիւնը, շրջանային եւ ազգային մակարդակներու վրայ: 1999 ի ներքին արտադրութեան անը նուազած է գրեթէ բոլոր երրոպայական երկիրներուն, նոյնիսկ Ֆրանսայի, Անգլիոյ եւ Կերմանիոյ մէջ: Երրոպայական Միութեան ուղեգիծը, յատկապէս անոր Կրասական Միութեան ուղեգիծը սկզբունքով համակարգուած բնոյթ ունի, սակայն դրամական քաղաքականութիւնը տարբեր ազդեցութիւն կ'ունենայ տնտեսական տարբեր մակարդակներու վրայ գտնուող եւ տարբեր ուղեգիծեր ունեցող երկիրներու վրայ: Այդ պատճառով ալ Լիթուանիան, որ դրամագլուխի կուտակման մասնակցաւոր շահին մէջ կը գտնուի, նոյն պայմաններով չի կրնար գործել, ինչպէս Յունաստանը, որ տակաւին հաստատութիւններու զարգացման շրջան մը կ'ապրի: Այս իրավիճակն է պատասխանատուն ակնկալուած անհամակարգումին:

Երրոպայական Միութիւնը նոյնիսկ դաշնակ-

ցութիւն չէ, անհկա կրցաւ մէկ դրամանիշ ստեղծել, սակայն՝ առանց կարենալ համարկելու երրոպայական տարբեր երկիրներու քաղաքական ուղեգիծները: Այս կը նշանակէ, թէ չկայ բան մը, որ կը պարտադրէ երրոպայական երկրի մը մնալ Երրոպայական Միութեան մէջ, եթէ իրեն անլի ձեռնոտու է քաշուիլ:

Հետեւաբար կրնանք ընել, որ Երրոպայական Կրասական Միութիւնը փորձարկուած չէր: Երրոպայի մնալ համակարգուած ամբողջութեան մը համար մէկ դրամական քաղաքականութիւն ստեղծելը անըմբռնելի է: Կարգ մը երկիրներ մեծ վնասներու կրնան ենթարկուիլ, որուն իբրեւ հետեւանք՝ կարգ մը ներքին քաղաքական ուժեր կրնան պահանջել պետութիւններէն լքել Երրոպայական Կրասական Միութիւնը: Եւ այս քայլին դիմողը անպայմանօրէն փոքր երկիրներ պիտի չըլլան, որովհետեւ հարցը չի վերաբերիլ տնտեսութեան, այլ՝ քաղաքականութեան: Կրասական Միութիւնը պիտի սկսի դատել, թէ Երրոպայական Կրասական Միութիւնը շահաւէտ է իր երկրին համար թէ ոչ: Այս երեւոյթն է պիտի օգտուի քաղաքագէտները, յատկապէս՝ կատաւարութեան անդամները, եւ պիտի ջանան իրենց երկրի տնտեսական ձախողութեան պատասխանատուութիւնը նետել Պրիսթլի կամ Ֆրանքֆորթ վրայ: Իբրեւ հետեւանք՝ Երրոպայական Միութեան կառուցը պիտի ստեղծէ իրավիճակ մը, երբ կատաւարութիւններուն համար նպաստաւոր պիտի ըլլայ ակնհայտաբար Երրոպայական Կրասական Միութեան եւ Երրոպայական Միութեան հանդէպ քաղաքացիներուն ունեցած վրստահութիւնը՝ իրենց պատասխանատուութեան խոստովանելու համար: Ասիկա անկալութիւնը պիտի ստեղծէ Երրոպայական Միութենէն ներս:

Յառաջիկայ տասնամեակը Երրոպայի մէջ փորձանքներու տասնամեակ մը պիտի ըլլայ հաւանաբար, սակայն անհկա ակնհայտաբար պիտի ըլլայ հաստատուն հիմնարկութիւններու քայքայման: Կազաթանկէտին կրնայ ըլլայ այն, որ Կերմանիա ստիպուած ըլլայ անգամ մը եւս պաշտպանել իր ազգային շահերը աշխարհի մը մէջ, որ անտարբեր է եւ թշնամանքով կը դիտէ իր պէտքերը: Այս վարկածը այն մտք միջանցքն է, ուրկէ Երրոպան չ'ուզէր անցնիլ դարձեալ, սակայն տակաւին յայտնի չէ, թէ պիտի կարենալ խոստովանել թէ ոչ:

«Կ. Ի. ԱՓՏԷՅԹ»

### ԼԵՀԱՍՏԱՆԵՒ ԻՌՈՒՍԻԱ

## ԼԵՀԵՐԸ ՓՈՒԹԻՆԵՆ ՎԱՆ ՈՒՆԻՆ

Այս օրերուն ռուսելեհական յարաբերութիւնները բաւական ցրտացած կարելի է համարել:

Յունուարին Լեհաստան երկրէն հեռացուց ինը ռուս դիւանագէտներ՝ գանձաքաղաք Երուսաղեմի մէջ իր գլխաւոր ուժերը եւ բաւական լրտեսելու յանցանքով: Փետրուարին Չեչենիոյ պատերազմին ընդմիջման լեհ ցուցարարներ ներխուժեցին Լեհաստանի Փոզնան քաղաքի ռուսական հիւպատոսարանը քանդելով անոր պատերը եւ այրելով ռուսական դրօշը: Մոսկուա գալուցանք տուն կանչեց Վարչաւիտի մէջ իր ղեկավարը, իսկ Լեհաստանը որակեց չեչեններու շահերը պաշտպանողներու «Բոյն»: Ուշագրաւ էր, որ Մոսկուայի գործածած բաւաժները կը մատնէր Ռուսիոյ այն մտնեցումը, թէ Լեհաստան կը մնայ խորհրդային Միութեան անուղղակի արբանեակը եւ ոչ թէ կը ներկայացնէ իր անկախութեան տիրացած երկիր մը:

Լեհերը այժմ կը յուսան, որ Վլատիմիր Փուլին մեծ չափով պիտի բարելուէ Ռուսիա - Լեհաստան յարաբերութիւնները: Սակայն լեհական կառավարութեան անդամներ Ռուսիոյ նորընտիր նախագահը «չեչենիա եւ նոր-կայսերապաշտ» մըն է, որ իր ամբողջական հակակշիռն տակ պիտի առնէ երկիրը: Այլ խոսքով՝ լեհերուն համար Փուլին ճիշդ այն ռուսն է, որ կը յիշեցնէ, թէ ռուսական զօրքերը իրենց հողին վրայ գտնուած են վերջին երեք դարերուն ընթացքին:

Անցեալ տարուէն ի վեր, երբ Լեհաստան անդամակցեցաւ ՕԹԱՆԻ, լեհերը այլեւս ռուսական ուղղակի գրաման վախը չունին: Լեհական բարձրաստիճան պաշտօնատարի մը համաձայն Ռուսիոյ Պալթեան գիւնուորակներ հողատարածքը նկատուող Քալինինկարտը, որ միաժամանակ Լեհաստանի ծայրամասը կը գտնուի, «որեւէ վտանգ չի ներկայացնէ»:

Ռուսական սարսափի մատնած են կարգ մը լեհեր, սակայն բազմաթիւ լեհեր պահ են, որ Փուլին որոշ չափով պիտի կարենայ գոյակ Պիեյուսիոյ տարրինակ ղեկավարը՝ Ալեքսանտր Լուքաչենքոն, որ կ'առտուի լեհերուն մեծամասնութեան կողմէ:

Ամէն պարագայի Փուլինի ընտրութիւնը Լեհաստանի արեւելեան սահմանը ուղղութեան կեդրոն կը դարձնէ: Լեհաստանի՝ Երրոպայական Միութեան անդամակցութեան բանակցութիւններուն մաս կը կազմէ Ռուսիոյ հետ սահմանագիծի պաշտպանութեան հարցը, որ վերջերս կը քննարկուի Պրիսթլի մէջ Երրոպայական Միութեան եւ Լեհաստանի բանակցողներուն կողմէ: Կարգ մը լեհեր կը խօսին նոր «պիւժիքական վարպետի» մը մասին, որ պիտի փոխարինէ Հինը:

Լեհաստանի մեծագոյն վախը այն է, որ նախագահ Փուլին Ուրբանիան պիտի առնէ իր ագրեսիւթեան տակ, իսկ Վարչաւիտ ցարդ Ուրբանիան նկատած է իր մեծագոյն ռուսական կանգնողները: Լեհաստանի համար Ուրբանիան վարպետ լինելու կողմէ ունենալը աղէտ է, կ'ըսէ Լեհաստանի արտաքին գործոց նախարար Պրիսթլու Կերեմէք: «Կեղի Արեւմուտք նախը Ուրբանիա մը ամէնէն լաւ երաշխիքն է շրջանային կայունութեան», կ'աւելցնէ ան: Սակայն ցարդ Ուրբանիա մեծ մտահոգութիւն մը եղած է Լեհաստանի համար: Վերջինս միշտ մեծ ներդրումներ կատարած է Ուրբանիոյ մէջ: Լեհ գործարարներու համաձայն, Ուրբանիոյ մէջ գործ ունենալը շատ վտանգաւոր է, այնպէս ինչպէս Ռուսիոյ պարագային: Վերջերս Լեհաստանի ելեմոտեքի նախարարը այցելեց Քիեւ, ուր քննարկեց Ուրբանիոյ տնտեսական բարեկարգման հարցերը, որոնք եթէ չդասաւորուին, կ'ըրնան երկիրը գործնելի խոցելի Ռուսիոյ ագրեսիւթեան:

**GAS G. Ayanian & Sons**  
 Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9  
 Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 583357

ԱՐՈՒԵՍՏԻ ԱՃՆԱՆՈՐԷՆ



«Ուայփորդի տուները». Ա. Ճեքսը (1917)

«ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՍՏԱՌԸ»

ԲԱՆԱՏԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ ԱՐՈՒԵՍՏԻ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑՆԵՐ ԿԸ ՓՐԿԷ ՄՈՌԱՑՈՒԹԵՆ ԵՒ ԶԱՆՈՆԵ ԵԿՈՒՂՆԵՐԵՆ ԸԱՆԵԼՈՎ ԿԸ ՅՈՒՅԱՂԻԷ ԸԱՆՐՈՒԹԵԱՆ

ԽՈՐԱՊՁԵՍ ՀԱՍՈՒՆ ԳՈՐԾԵՐ

Այցելուներուն արցունքները կր վկայեն ցուցադրուած գործերուն գորուծեան մասին: Յուցահանդէսին պատասխանատուն կր պարմանայ, թէ ինչպէս անփորձ արուեստագէտներու խումբը յաջողած է այնքան ցայտուն գիծերու մէջ պատկերել պատերազմը: «Անոնք շատ երիտասարդ էին. մեծ մասը՝ 20 տարիքի շուրջ. եւ արտադրած են անհաւատալի հաստունութեամբ իրագործըւած արուեստի նմուշներ»: Կր բացատրէ ան:

«Պատերազմի պատառը» յտակարէն ցոյց կու տայ, թէ ինչպէս պատերազմի վերաբրող արուեստը կուի զաշտին վրայ Հերոսական այրերու պատկերումէ վերածուած է ազգայնապաշտ արտայայտութեան եւ կուի նպատակը Հարցականի տակ առնող միջոցի:

Սկիզբը Բրիտանիայէն, Պեմիքայէն եւ այլ երկիրներէ արուեստագէտներու պարտականութիւն տրուած էր պատկերել Ա. Աշխարհամարտին մասնակցող քանատական գործասերը: Ազգայնապաշտը յաճախ շարժումով լեցուն փողփողուն պատատներ էին:

Քանատացի արուեստագէտներ պատերազմի ճակատ ուղարկուեցան 1917ին, սակայն անոնց աւելի փորձառական եւ սկեպտիկ գործերը երկիրը բարձրացուցին արուեստի մեծ կեդրոններու մակարդակին:

«Աւելի առողջ ոլիտի ըլլալինը, եթէ մոռնալինը պատերազմը, սակայն չենք կրնար: Ընդմիջտ ոլիտի կրեցք անոր վիճեցնող եւ անգուր խաղին հետքերը»: Րոսա է քանատացի գեղանրկարիչ Ֆրեմերիք Վարլէն, որուն «Ինչի» համար գեղանկարը կր պատկերէ դիակներու դէպի մը կողքին կանգնած մեռելաթաղ մը:

Քանատացի իշխանութիւններուն համար աւելի ցնցիչ էր Էրիք Քենինկլիթընի «Ջոհերը» վերնագիրով ապագայապաշտ գեղանկարը, որ պողպատի եւ մետաղային գոյներու երանգներով կր պատկերէր ողջ ու մեռած զինուորներ, որոնք կը քայլին դիակներու վրայէն: Հետագային գեղանկարը կոչուած էր «Նուաճողներ»:

«Շատ կապկածով կը մօտեցամ էրիք Քենինկլիթընի: Անոր արուեստի ողբ մը բոլորչութեամբ հետո: Ե արեւմտեան ուղի թիւններէն եւ արձանագրութեան արժանի չէ», գրած է վիպագիր Է. Քանատացի Հետագայ ընդհանուր կառավարիչ Ճոն Պուլչան:

Ֆրեմերիք Վարլէն, Ա. Ճեքսը, Ֆրեմերիք Վարլէն եւ Արթըր Լիմբըր Հետագային մաս կազմեցին «Եթեմերու խմբակին», որ կր դադանաք քանատացի վրայէն գեղանկարչներէն, որոնց մտայն եւ մեթոմարձոտ բնակարանները յաճախ կր պատկերէին Հիւսիսային Օնթարիոն եւ կր պարունակէին տապալած եւ անդամահատուած ծառեր,

ինչ որ պատերազմի ազդեցութեան հետեւանք էր:

ԿՈՏՐՈՒԱԾ ԵՒ ՓՇՐՈՒԱԾ ԲԱՆԵՐ

«Չեմ ուզեր նկարել պայծառ բաներ. այլ կոտորուած եւ փշրուած պատկերներ», Րոսա է Ճեքսը:

Պատերազմի գեղանկարները առաջին անգամ ցուցադրուած են 1919ին՝ նշելով քանատական արուեստին մուտքը միջազգային աշխարհ: «Ա. Աշխարհամարտէն առաջ քանատական արուեստը անհնչան էր եւ սահմանափակ: Պատերազմէն հետք անկալ բռնիք առաւ եւ լակարծ հաստուն գտաւ: Եթէ պատերազմը չըլլար, յառաջիկային անելի դանդաղ ոլիտի ընդհանր», կր բացատրէ ցուցահանդէսին պատասխանատունը:

Սակայն հակառակ սկզբնական շրջանի խանդավառութեան, պատերազմի քանատական սրբապատկերները:



«Չեմ ուզեր նկարել պայծառ բաներ. այլ կոտորուած եւ փշրուած պատկերներ», Րոսա է Ճեքսը:

Լեւտոր շուտով մոռացութեան մատնուեցաւ պատերազմի յիշողութիւնները թաղելու հաւաքական ցանկութեան մը մէջ: 11 քանատացիներէն կր սպաննուած էր Ա. Աշխարհամարտին (գոհներու ընդհանուր թիւը 60 հազար էր):

Սակայն շուտով աշխարհը դարձաւ պատերազմով լրանկեցաւ եւ արուեստագէտներու նոր սերունդը մը աշխատանքի լծուեցաւ: Անոնք նուազ հետաքրքրուած էին Հերոսական պատկերումներով եւ կր ձգտէին ցոյց տայ պատերազմի իրականութիւնները:

Քանատացի Ազգային պատկերասահին պատասխանատուն՝ Հերի Մքքերի, որ գեղարուեստի մասին շատ բան չէր գիտեր, մաս կը կազմէր պատերազմի երթելու պատրաստ արուեստագէտներ փնտռող յանձնախումբին: Ան դժգոհ էր այդ օրերուն գրեթէ անծանօթ գեղանկարիչ Ալեքս Քոլվիլի ընտրութեանը:

«Քոլվիլի մէկ գործը այժմ կախուած է ակադեմիային ցուցասրահին մէջ եւ անձնապէս կը

կարծեմ, որ սարսափելի է զայն բառերով նկարագրելը: Մեր համարը ոլիտի ցեխոտի, եթէ անելի լաւ արուեստագէտներ չընտրեցք», Րոսա է Մքքերի:

Քոլվիլի աւելի քան 400 գեղանկար գծած է պատերազմի ընթացքին եւ այժմ կր նկատուի Քանատացի լաւագոյն արուեստագէտներէն մէկը:

Այլ արուեստագէտներ աւելի դժուար դիմագրաւած են պատերազմի արհաւիրքը: Օղուժի գեղանկարիչ Միլըր Պրիթընը մտային խանգարումէ տառապելով՝ Քանատա վերադարձած է: ան երկու տարի ծառայած է իրրեւ ռուսի թիւրքախներ ճշդ ողջ նշանառու, ապա դարձած է արուեստագէտ: Անոր «Գիշերային թիւրք» Գերմանիայէն գեղանկար փոքր եւ մուծ պատաստմըն է եւ կր պատկերէ օդանաւային յարձակում մը: Երկիրը լուսաւորուած է Հետախոյզ ռումբերով եւ հակօդային կրակոցներով:

«ԳՈՒՏԱՐՆԵՐՈՎ ԼԵՅՈՒՆ ԳԱՂԱՎ ՄԵ»

«Օղանաւային յարձակումի եկեղանկուող գերմանական քաղաք մը յաճախ կը նմանէր գոհարներով լեցուն դազաղի մը, որ կը բացէր յիշեցնելով Ուոլթ Տիլդեյի մէկ ժամանակը: Սարսափելի էր եւ չարաշուք, սակայն՝ հրաշալիօրէն գեղեցիկ: Կ'ըսեն, թէ իմ թիրախիս պատկերը իրական է, սակայն այս վայրկեան կը զգամ, թէ մուտք կը գործեմ դազաղի մէջ», գրած է Միլըր Պրիթընը:

Կարգ մը արուեստագէտներ աւելի մօտէն հետեւած են պատերազմի գործողութիւններուն, քան ինչ որ նախապէս ծրագրած էին: Պրուեստ Պոպաք ստիպողարար «Նուագուած» է իր մասը մը մէջ, պաշտպանուելու համար ցած թռչող օդանաւ մը յարձակումէն: «Կը զգայի, որ կ'իջնայ ի մեռած զինուորի մը վրայ, եւ երբ զարնուեցայ անոր, մարմինը տարածուեցաւ գետնին վրայ, սակայն շատ կը վախճայի եւ չէի կրնար դուրս գալ», կը վերջիչէ ան:

Բ. Աշխարհամարտին ետք է, որ Քանատացի պետութիւնը սկսաւ մնայուն նպաստ յատկացրնել արուեստներուն: Բ. Աշխարհամարտը առիթ մը եղաւ, որ քանատական արուեստը ապացուցէ իր արժանիքները եւ պետութիւնը մշակութային հաստատութիւններ հիմնէ նեցուկ կազմելու համար անոր:

Սակայն պատերազմի արուեստին նուիրուած երկրորդ ցուցահանդէսը եւ շուտով մոռցուեցաւ: Կարգ մը գործեր 1982ին 1971ի միջեւ շրջեցան զինուորական կեդրոններ, ապա շուրջ 30 տարի մնացին նկուղներու մէջ:

«Գեղանկարները պատուաւ եւ վիրաւորուած էին լքուած մանուկներու պէտք», կ'ըսէ ցուցահանդէսին պատասխանատուն: Ցուցադրուած գործերէն շատերը մարտկրկին կորուստի մարտուած են բամբակով: Չանոնք կարելի է տեսնել դիմապատկերները հետեւեալ հասցէին. [www.warmuseum.ca](http://www.warmuseum.ca).

ԳԻՐԷԻ ՍԻՐԱՇԱՐՆԵՐՈՒ ԴՐԱԽՏԸ

ԳՐՈՒԱՅԻ ԳԻՐԷՐՈՒ, ԻՆՁՐՆԵՒԹ ԿՐԱՅ ԿԱՐԴԱՑՈՒՂ ՕՐԱՎԵՐԹԵՐՈՒ ԵՒ Ի - ՄԷՅԻ ԱՃՆԱՆՈՐԷՆ ՄԷՍ ՄԻՆԱՆՅԻ ՄԱՆՆԱՂԱՐԱՆՆԵՐԵՆ ՄԷԿ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՎ ԵՒ ՅՈՒՅԱՇԱԿԵՆ ՄԸ, ՓԱՍՏԵԼՈՒ ԸԱՄԱՐ, ՈՐ ԳԻՐԷՐԸ ԿԸ ԳՈՅԱՏԵԻՆ

Միլանոյի Պիպիոթեքս Ամպրոսիանայի մէջ կայացող ցուցահանդէսին ամենէն հին մատենաւ կը պատկանի եգիպտացի դպիրի մը. որ այս գրի առած է Լեյքքաճոնիոյ մէջ, աւելի քան 1500 տարի առաջ: Հոմերոսի դիւցազներգութեան Իլիականի պատկերագիրը մէկ մատենաւ կը պարունակէ գծանկարներ ոսկեգոյն, կապոյտ եւ նարնջագոյն հանդերձանքով յոյս պատերազմիկներու. որոնք ճակատամարտ մը կը մղեն Տրոյվաղայի պարիսպներու առջեւ:

